«ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Մեր երկրի գիտամշակութային կյանքում իր տեղն է հաստատում Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Դպրատունը։ Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսը ցանկացավ, որ այն դառնա հոգևոր-մշակութային և գիտական յուրատեսակ մի կենտրոն, և ահա հաստատության կամարների տակ արդեն կազմակերպվել են մի շարք շնորհանդեսներ, գիտաժողովներ, բացվել են կերպարվեստի հարուստ ցուցահանդես-թանգարան և գրադարան։ Երկու տարի անընդմեջ գործել է հաստատության գիտական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են անվանի հայագետներ։

«Աստվածաշնչական Հայաստան». այսպես էր կոչվում այս տարվա հունիսի 21—24-ը Օշականում գումարված միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր Հայաստանում Քրիստոնեության պաշտոնական ընդունման 1700-ամյակին։ Ս. Մեսրոպ Մաշտոց Դպրատան հետ համատեղ որպես կազմակերպիչ հանդես էր գալիս նաև Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի նկեղեցական հանձնաժողովի գրասենյակը։ Անշուշտ, գլխավոր հովանավորը ինքն էր, երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետը, որն առանձին սիրով էր կապված օշականյան սրբավայրի հետ։ Այսօր մեզ հետ չկան նաև Ս. Մեսրոպ Մաշտոց Դպրատան անդրանիկ դիտական խորհրդի անդամներ Վաչե Նալբանդյանը, Գագիկ Սարգսյանը և Լենդրուշ Խուրշուդյանը, որոնց հիշատակին Օշականում հտրգանք մատուցվեց թե՛ բացման նիստի, թե՛ եզրափակիչ օրվա սուրբ Պատարագի ժամանակ։

Գիտաժողովը դարձավ ոչ միայն գիտական, այլև մշակութային նշանակալից երևույթ։ Այն ուղեկցվում էր ցուցահանդեսներով, համերգներով, ուղևորություններով, որոնք ոչ միայն հարստացնում էին գիտաժողովի աշխատանքային առօրյան, այլև ավելի պատկերավոր ու առարկայական էին դարձնում նրա ասելիքը։ Արդեն հունիսի 21-ին Երևանում բացվեցին երկու կարևոր ցուցահանդեսներ. Մատենադարանում ներկայացվում էին Աստվածաշնչի իսկապես արժեքավոր ձեռագիր օրինակներ, իսկ Ազգային գրադարանի ցուցահանդեսը հանրության ուշադրությանը հանձնեց հնատիպ հազվագյուտ հրատարակությունների հարուստ ու հետաքրքիր հավաքածու։ Հաջորդ օրը արձագանքեց Ազգային պատկերասրահը՝ բաց անելով «Հայաստան – Աստվածաշնչական երկիր» խորագրով կերպարվեստի ցուցահանդես։ Գիտաժողովի մասնակիցների համար համերգներ հնչեցին մայրաքաղաքի կամերային երաժշտության տանը, Օշականում, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում։ Այլ խոսքով իրականացվեց մշակութային ձեռնարկների մի համալիր ծրագիր, գիտական համաժողովը դուրս բերելով նման ձեռնարկների համար սովոր միապաղաղությունից։

Կենտրոնական իրադարձությունն, անշուշտ, ինքը գիտաժողովն էր, որի բոլոր նիստերն անցկացվեցին Դպրատանը։ Հունիսի 22-ի առավոտյան մասնակիցներն ու հյուրերը այցելեցին և ծաղկեպսակ դրեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմին, որի անունը կրող նկեղեցում ներկա եղան առավոտյան ժամերգությանը։ Հայ գրերի ստեղծողի, Աստվածաշնչի առաջին հայ թարգմանչի ոգեղեն ներկայությունը գիտաժողովին հաղորդում էր լիցք ու ներշնչանք։

Գիտաժողովի բացման արարողությունը կայացավ Դպրատան նիստերի դահլիճում։ Մասնակիցներին ողջույնի խոսք ասացին Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, ՀՍՍՀ ԳԱԱ ակադեմիկոս բարեուղար Վլադիմիր Բարխուդարյանը, Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանը, թեմի առաջնորդ Նավասարդ եպս. Կճոյանը, ինչպես նաև Հայաստանում Քրիստոնեության պաշտոնական ընդունման 1700-ամյակի գրասենյակի վարիչ տնօրեն Մեսրոպ արք. Աշճյանը, որն իր զեկուցման մեջ անդրադարձավ ոչ հեռավոր անցյալի իրադարձություններին. 1935 թ., երբ նշվեց Աստվածաշնչի թարգմանության 1500-ամյակը, հայաստանյան գիտնականները գրեթե մասնակցություն չունեցան արտերկրում կայացած դիտական հավաքներին ու ժողովներին։ Եվ ահա, մեր անկախ հանրապետությունում առաջին անգամ, թերևս, այսքան խորը և ընդգրկուն անդրադարձ է կատարվում սոցիալական թեմաներին

և մեր բազմադարյան պատմության ընթացքում «Թարգմանության թագուհու» խաղացած հրաշակայական դերին։

Սահակ-Մեսրոպյան ժամանակներից Աստվածաշունչը հոգևոր մեկնակետ և հիմնաքար դարձավ մեր ողջ քրիստոնյա մշակույթի համար։ Աստվածաշունչ մատյանը կարելի է դիտարկել ամենատարբեր այլ առումներով։ Եվ. այն Հայաստանյաց Առաքելական եկեղեցու կառույցի և ծիսական կյանքի, դրանց զարգացման պատմության հիմնառանցքն է, անփոխարինելի աղբյուր պատմագիտության համար, անսպառ նյութ՝ թարգմանչական և գրչության արվեստների ուսումնասիրողներին։ Այն նաև ներկայի գործոն է, այժմեական երևույթ, որ շոշափելի ազդեցություն է թողնում հասարակության զարգացման ընթացքի վրա։ Այս մտքերը այս կամ այն կերպ արտացոլվեցին Մատենադարանի տնօրեն ակադ. Սեն Արևշատյանի, բանասեղծ Լևոն Միրիջանյանի, ակադեմիկոսներ Հրաչյա Բարթիկյանի, Պարիս Հերունու, ինչպես նաև Ներսես արք. Պողոսյանի, ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Շահե արք. Աճեմյանի և պատմ. գիտ. դոկտոր Ս. Կրկյաշարյանի զեկուցումներում, որոնք ընթերցվեցին երկու լիագումար նիստերի ընթացքում։

Այնուհետև գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին վեց մասնաճյուղերում, որոնք կրում էին «Աստվածաշունչը և Հայ Եկեղեցին», «Հայաստանը Աստվածաշնչում», Աստվածաշունչը և հայ բանասիրությունը», «Աստվածաշունչը և հայ բնագրագիտությունը», «Աստվածաշունչը և հայ մշակույթը», «Աստվածաշունչը և հայ իրականությունը» անվանումները։ Նշենք, որ գիտական զեկուցումներով հանդես եկան 96 մասնակիցներ, որոնք ներկայացնում էին ակադեմիական հումանիտար բոլոր հաստատությունները, մայր բուհը, այլ կրթօջախներ, ստեղծագործական միություններ և, անշուշտ, Հայ Առաքելական Եկեղեցին։ Մասնակիցների թվում կային նաև բնական ու ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչներ։ Մեծավաստակ գիտնականների կողքին հանդես գալու լայն հնարավորություններ էին ստացել հայագիտության ասպարեզ նոր-նոր ոտք դրած երիտասարդները։ Ժամանել էին գիտնականներ նաև արտասահմանյան երկրներից։

Կաշկանդիչ ավանդույթներից ձերբազատման ընթացքի արտացոլք կարելի է համարել «Աստվածաշունչը և Հայ Եկեղեցին» մասնաճյուղի աշխատանքը, որտեղ մեր եկեղեցու պատմական դերը, նրա կառույցի ու ծիսական կյանքի հիմնահարցերը ստանում էին օբյեկտիվ, գիտականորեն հիմնավորված գնահատականներ։ Վիգեն արք. Այքազյանի, Վրեժ Վարդանյանի, Ռաֆայել Համբարձումյանի, Քնարիկ Տեր-Դավթյանի զեկուցումներում արծարծվեցին հայ եկեղեցու պատմության հարցեր։ Հայ առաջին քրիստոնեական համայնքները ձևավորվեցին Առաքյալների շնորհիվ, որոնք իրենց իշխանությունն ստացել էին Հիսուս Քրիստոսի ձեռքից։ Առաջին դարում Սյունիքի և Արտազի եպիսկոպոսապետությունները սկիզբ դրեցին Հայ եկեղեցուն, որի սկզբունքները փաստորեն հաստատվեցին Քրիստոսի ձեռամբ։ Վիգեն Սրբազանի այս գաղափարը իր շարունակությունն ունեցավ Ռ. Համբարձումյանի արտահայտած մտքերում, որը եկեղեցու և քրիստոնեական համայնքի կազմակերպման սկզբունքները տեսնում է նաև միջնադարյան հայ պետականության կառուցվածքի մեջ։ Առանձին զեկուցումներ նվիրված էին եկեղեցու հայրերի՝ Գրիգոր Տաթևացու, Ստեփանոս Սյունեցու, Անաստաս Վարդապետի, Հուսիկ արքեպիսկոպոսի, Խրիմյան Հայրիկի ժառանգությանը։ Մեկ այլ խումբ էին կազմում հայ եկեղեցու ծեսերին ու արարողություններին նվիրված զեկուցումները։ «Ծես և Աստվածաշունչ»՝ այսպես էր կոչվում Միքայել ծ. վրդ. Աշպահյանի զեկուցումը, որտեղ զանազան օրինակների միջոցով հեղինակը հայ եկեղեցու այս կամ այն ծեսը կապում է հայատացյալների շրջանում աստվածաշնչյան գաղափարները տարածելու նպատակադրման հետ։ Գրեթե նույն կերպ են բացատրվում հայ հոգևոր երգի տարածման արմատները նաև Աստղիկ Մուշեղյանի ու Արփի Վարդումյանի զեկուցումների մեջ։ Մինչդեռ արվեստագետ Հենրիկ Հովհաննիսյանը պատարագի մեջ տեսնում է նախաքրիստոնեական դրամայի տարրեր, որոնք հայ ծիսակարգի մեջ դրսևորվում են տարբեր ձևերով («Հնագույն դրամայի մետամորֆիզմը քրիստոնեական պատարագում»)։

Արժեքավոր էր Պետրոս Հովհաննիսյանի հաղորդումը Նիկողայոս Ադոնցի «Հայկական Վարք սրբոց ժողովածուները» անտիպ աշխատության մասին։

Աստվածաշունչ մատյանում մի շարք հիշատակություններ կան Հայկական լեռնաշխարհի մասին, որոնք վաղուց ի վեր գրավել են հայագետների ուշադրությունը։ Դրանց հետ կապված հիմնախնդիրները քննության առարկա դարձան «Հայաստանը Աստվածաշնչում» մասնաճյուղի աշխատանքների ընթացքում։ «Գայթակղության քարը» Արարատ լեռան ան-

վանումն ու տեղորոշումն էր։ Խնդրին մոտենալով տարբեր տեսանկյուններից, զեկուցումները հեղինակները հաճախ արտահայտում էին իրարամերժ կարծիքներ։ Այսպես, Ջրհեղեղի աստվածաշնչական պատումը զուգադրելով Հովսեպոս Փլավիոսի հաղորդած տարբերակի հետ, Սիմոն Կրկյաշարյանը տապանակիր լեռը տեղադրում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասերում։ Էդուարդ Դանիելյանը բերում է աստվածաշնչյան Արարատը Մասսի հետ նույնացնելու մի բավականաչափ լուրջ կռվան՝ ելնելով «Արարածոց մեկնութիւն» սկզբնաղբյուրի մեջ. այդ նշանակում է արդեն, որ 5-րդ դարում տապանակիր լեռ համարվում էր Մասիսը։

Նույն վարկածի հաստատման համար Գևորգ Աբգարյանի և Վահագն Աբգարյանի «Արարատը Կումրանի ձեռագրերում» զեկուցման մեջ բերված են փաստարկներ, ըստ որոնց Աստվածշնչի արամեերեն տեքստի նախնական տարբերակում հիշատակված է եղել ոչ թե «Քարդու», այլ «Արարատ» լեռնանունը, և դա հաստատվում է արամեերեն «Մենդաց գրքի» պարականոն շարադրանքի 1947 թ. Կումրանում հայտնաբերված մի ձեռագրի տվյալներով։ Ըստ հեղինակների (զեկուցումը ներկայացրեց հանգուցյալ Գ. Աբգարյանի որդին՝ հարակից զեկուցող Վ. Աբգարյանը) Արարատի և Մասսի նույնությունը հայտնի է եղել նաև մեր հին հեղինակներին։

Նույն տեսակետը այլ փաստարկների միջոցով պաշտպանելու փորձ է կատարում Մուրսդ Օհանյանը իր «Հայկական լեռնաշխարհի մի քանի հնագույն տեղանունների ստուգաբանությունը և տեղորոշումը Աստվածաշնչի միջոցով» զեկուցման մեջ։

Ինչպես նշվեց, եղան այս տեսակետին տրամագծորեն հակառակ կարծիքներ։ Համլետ Պետրոսյանը աստվածաշնչական Արարատը տեղադրում է Հայկական լեռնաշխարհի Միջագետքին սահմանակից հատվածում, իսկ Մասիսը Արարատ վերանվանվելու իրողությունը կապում է 11-րդ դարի Խաչակրաց արշավանքի հայաստանյան արձագանքների հետ։ Սիմոն Հմայակյանը Արարատը տեղորոշում է հնագույն Նիբուրի (Ջուդի դաղ) լեռներում («Աստվածաշունչը և Արարատյան թագավորությունը»)։ Արարատը Կորդուքում տեղորոշելու միտումը կար նաև Արտակ Մովսիսյանի զեկուցման մեջ, թեպետ այն հիմնականում շոշափում էր շումերական արձանագրությունների «Արատտա» և հետագա «Ուրարտու» երկրանունների ծագումնաբանական կապի խնդիրը։ Մաքսիմ Կատվալյանը Քարդու և Արարատ տեղանունները համարում է հոմանիշ երկրանուններ և գտնում, որ այդպես անվանվել է ոչ թե որևէ կոնկրետ լեռ, այլ ամբողջ լեռնաշխարհը, հետագա Հայքը ամբողջությամբ։

Մասնաճյուղում շոշափվեցին զանազան այլ հարցեր ևս։ Հովհաննես Կարագյոզյանի «Աստվածաշունչը և ուրարտական աղբյուրները» զեկուցումը կապեր է բացահայտում աստվածաշնչական Ռասոն թագավորի և ուրարտական արձանագրությունների Ռուշանե արքայի անունների միջև և հավանական համարում, որ խոսքը գնում է միևնույն անձի մասին։ Բարկեն Հարությունյանի զեկուցման մեջ նորովի տեղադրություն է ստանում սուրբգրական «Թորգոմանը», այն ոչ թե նույնանում է Թիլ Գարիմու երկրի, այլ ողջ լեռնաշխարհի, Հայաստանի ու Հայկյանների հետ։

Իր զեկուցման մեջ («Աստվածաշնչի ծագման հարցի շուրջը և ծիսական արարողությունների վաղագույն արմատները Մեծամորի տաճարում») Աստվածաշնչի վրա հնագույն կրոնների ազդեցությունների հետքեր է նշմարում Էմմա Խանզադյանը։ Պավել Ավետիսյանի և Արսեն Բոբոխյանի զեկուցումը նվիրված էր Տիգրիսի ու Եփրատի ակունքների աստվածաշնչական հիշատակություններին, իսկ Սիմոն Կամսարական-Շահազիզյանը Երկիր մոլորակի բնագիտական էվոլյուցիան զուգադրում է աստվածաշնչական աշխարհաստեղծման պատումի հետ, գտնելով, որ այդ պատումը այլաբանական արտացոլումն է իրական բնական պրոցեսների։

«Աստվածաշունչը և հայ բանաստեղծությունը» մասնաճյուղի թեմատիկայի քննարկումները փաստորեն սկսվել էին լիագումար նիստերի ժամանակ։ «Խորենացին և Աստվածաշունչը». այդպես էր կոչվում Շահե արք. Աճեմյանի զեկուցումը։ Աստվածաշնչի և Քերթողահոր «Հայոց պատմության» միջև զուգահեռներ տանելով, հեղինակը գտնում է, որ Հայոց մեծաց ծննդաբանությունը ընթանում է Հնգամատյանի ծննդաբանությանը համաձայն։ Նպատակ ունենալով հայոց ծագումը բխեցնել աստվածաշնչական հայտնի նահապետներից, Խորենացին ճշտում է իր ժողովրդի տեղը՝ որպես «ազգ հյուսսականաց»։ Ամբողջ պատմության խորքի վրա զգացվում է Հայոց պատմությանը աստվածաշնչական երանգ հաղորդելու միտումը։

Մասնաճյուղի ընդգրկումները բավականաչափ լայն էին։ Նախ իր հաստատումն էր գտնում այն միտքը, որ Աստվածաշունչը հայերենով հնչեցնելու պահից ի վեր, նախագրային գրական ժառանգության բացակայության կամ կորստյան պայմաններում, այն իր ազդեցություն-

ների դրոշմն է դրել հայ պոեզիայի, պատմագրության, հրապարակախոսության, գրական ողջ մշակույթի վրա։ Այդ խնդիրներին էին նվիրված Արշալույս Ղազինյանի «Գրիգոր Նարեկացին և նրա երգոցը», Սարգիս Մխիթարյանի «Աստվածաշունչ մատյանը և Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողյան» պոեմը», Աննա Արևշատյանի «Աստվածաշնչային կոնցեպցիան հայ միջնադարյան «Զայնից» մեկնություններում», Գառնիկ Անանյանի «Հայ աստվածաբանական հրապարակախոսության ծնունդը», Արտաշես Մաթևոսյանի «Հայոց գիրը և գրերի գյուտը» զեկուցումները։

Իր անդրանիկ գիտական զեկուցումն էր ներկայացրել ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի շրջանավարտ Անահիտ Ավագյանը. այն նվիրված էր Դիգախեի («Վարդապետութիւն երկոտասան Առաքելոց») աստվածաբանական վերլուծությանը, մի դավանաբանական երկի, որ համարվում է ամենահին ժամագիրքը և շուրջ երեք դար մաս է կազմել Նոր Կտակարանի կանոնի։

Տեքստաբանական, բանասիրական, ձեռագրագիտական և արվեստաբանական բնույթի հետազոտությունների արդյունքներ էին պարունակում «Աստվածաշունչը և հայ բնագրագիտությունը» մասնաճյուղում ընթերցված մեկ տասնյակից ավելի զեկուցումները։ Ալբերտ Մուշեղյանի զեկուցման մեջ («Մեսրոպ Մաշտոցի համառոտ Աստվածաշունչը») առաջ է քաշվում Եփեսոսի տիեզերական ժողովից առաջ շրջանառության մեջ գտնվող Հին և Նոր կտակարանների համառոտ շարադրանքի գոյության վարկածը։ Ըստ հեղինակի, այն տարածված էր Մեծ Հայքի բոլոր եկեղեցիներում և նույնանում է Ագաթանգեղոսի երկրորդ գրքի Ս. Գրիգորի վարդապետության հետ։ Այդ առձեռն Աստվածաշնչի հեղինակներ զեկուցողը համարում է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին։

Արշակ Բանուչյանի զեկուցումը շոշափում էր Եվթաղյան մատենագրության ուսումնասիրության խնդիրները։ Հեղինակը համոզված է, որ Եվթաղի «Բովանդակություն աստուծեղեն վկայութեանցն» բնագրով կարելի է խմբավորել Աստվածաշունչ գրքի ձեռագրական ընտանիքները, կատարել բնագրային ճշտումներ ու պարզաբանել որոշ խմբագրական ազդեցություններ։ Զեկուցման մեջ հիմնավորվում էր ձեռագրերի կոդավորման նոր համակարգի ստեղծման անհրաժեշտությունը։

Հարություն Ժամկոչյանը տեղեկացրեց, որ Մատենադարանի 1202 ձեռագրում հայտնաբերված է սամարական ձեռագրի մի հատված։ Ելնելով բնագրի առանձնահատկություններից, զեկուցողը եկել է եզրակացության, որ այդ հատվածը պետք է լինի ավելի ծավալուն և հնարավոր է կորած թերթերի ի հայտ գալը հայկական այլ ձեռագրերում։

Աստվածաշնչական հղումների, հունարենից թարգմանված եկեղեցական կանոնների, վարքագրությունների և այլ բնագրերի ուսումնասիրություններ էին ամփոփված Արմեն Մալխասյանի, Մանե Շիրինյանի, Գոհար Մուրադյանի զեկուցումներում։ Երկու զեկուցում (Ավետ Ավետիսյան. «Մենդոց» շարքը Զաքարիա Ավանեցու ձեռագրերում» և Էմմա Կորխմազյան. «Աստվածաշնչական թեմաները 13—14 դդ. հայկական ձեռագրերում») նվիրված էին գրչության և մանրանկարչության արվեստին։

Մեծ է Աստվածաշնչի ազդեցությունը հայ մշակույթի այլ բնագավառների վրա ևս։ «Աստվածաշունչը և հայ մշակույթը» մասնաճյուղում զգալի տեղ տրվեց հայ կերպարվեստում աստվածաշնչական թեմաների արտացոլմանը։ Շահեն Խաչատրյանի, Անուշ Տեր-Մինասյանի, Զեփյուռ Թառայանի զեկուցումները տեսական ընդհանրացումներ էին պարունակում ժամանակակից գեղանկարչության և քանդակագործության խնդիրների մասին։ Հրավարդ Հակոբյանը («Տերունական պատկերները ձեռագիր մատյաններում») առաջ քաշեց հայկական պատկերագարդության հետ կապված հիմնահարցեր. նրա կարծիքով սրբապատկերների հանդեպ ընդհանուր քրիստոնեական վերաբերմունքը ունի իր անհերքելի դրսևորումները նաև հայ իրականության մեջ։

Առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում Սուրեն Սաղումյանի «Խաչելությունը և դծոիրքի տեսիլները միջնադարյան պատկերաքանդակներում» և Արմեն Ղազարյանի «Թեկղե նախավկայի և Պողոս Առաքյալի պատկերները Էջմիածնում» զեկուցումները։ Առաջինը 9—13-րդ դդ. խաչքարերի ընձեռած նյութի վրա լուրջ հնագիտական ու արվեստագիտական վերլուծություններ է կատարում, հանգում կարևոր ընդհանրացումների։ Երկրորդ զեկուցման մեջ նշվում է, որ Թեկղեի հայկական պատկերագրությունը սերտորեն առնչվում է դիմանկարի անտիկ ավանդույթներից եկած և 4—5-րդ դդ. քրիստոնեական արվեստի մեջ արմատացած ոճավորումներին։ Նույն կերպ ուսումնասիրության են ենթարկված նաև Դանիելի և Հովնանի, Հայոց

դարձի գլխավոր դեմքերի միջնադարյան պատկերագրությունները, համապատասխանաբար՝ Աղավնի Ժամկոչյանի և Քնարիկ Ավետիսյանի զեկուցումներում։

Անդրադարձեր եղան կիրառական արվեստի նմուշներին։ Լիանա Ավանեսյանի զեկուցման թեման խորան զորգի քրիստոնեական խորհուրդն էր, իսկ Արամ Քալանթարյանի, Նյուրա Հակոբյանի և Հուսիկ Մելքոնյանի զեկուցումը նվիրված էր Քրիստոսի վարքի պատկերագրությունը կրող ոսկերչական իրերին։

Անցյալի և ներկա հայ իրականության վրա աստվածաշնչի բազմաշերտ ազդեցությունները հետազոտողներին առաջադրում են բազմ խնդիրներ։ «Աստվածաշունչը և հայ իրականությունը» մասնաճյուղում հանդես եկան փիլիսոփաներ, բանասերներ, պատմաբաններ, հոգևորականներ, որոնք հիմնախնդիրները քննարկեցին ամենատարբեր հայկետերից։ Հայ փիլիսոփայության պատմությունը սերտորեն առնչվում է քրիստոնեական ուսմունքի և եկեղեցու հետ։ Դեռ 5-րդ դարից սկսած աստվածաշնչական դրույթները փիլիսոփայական մեկնաբանությունների են ենթարկվում, ստեղծվում է մեկնողական հարուստ գրականություն, որտեղ քննվում էին գոյաբանության, տիեզերաբանության ու մարդաբանության հարցեր։ Գիտաժողովում այս հիմնախնդիրներին անդրադարձավ Սեն Արևշատյանը։

Հովհաննես Ջուղայեցու փիլիսոփայական հայացքների վերլուծությամբ հանդես եկավ Հրաչյա Միրզոյանը, իսկ Մովսես Բաղրամյանի գաղափարական սկզբունքները քննության ենթարկվեցին Գագիկ Մելքոնյանի զեկուցման մեջ։

Եկեղեցի և պետություն, եկեղեցի և դպրոց, եկեղեցի և իրավունք, ահա այն թեմաները, որոնք այս կամ այն կերպ իրենց արտահայտությունը գտան նշված մասնաճյուղի աշխատանքների ընթացքում։ Քրիստոնեական բարոյականության հարցեր արտացոլվեցին Մեյա Քացախյանի «Կրոնասիրությունը որպես անձի հոգևոր պահանջմունք» զեկուցման մեջ։ Արգար Ափինյանի զեկուցումը նվիրված էր արգի հայ գրականության մեջ աստվածաշնչական թեմաների արտացոլմանը, իսկ Պուշկին Սերոբյանը հետաքրքրական զեկուցում կարդաց «Աստվածաշունչը և իրավունքը» թեմայով։

Հետաքրքրության արժանի էր նաև Ֆիզիկոս Պարիս Հերունու զեկուցումը, որը ընթերցվեց դեռևս լիագումար նիստի ժամանակ։ Ակադեմիկոս Սիսիան քաղաքի մոտ գտնվող փարե հնադարյան աստղադիտարանում չափումներ և ուսումնասիրություններ է կատարել, որոնց տվյալները գալիս են հաստատելու շատ հազարամյակներ առաջ Հայաստանում գոյություն ունեցող զարգացած մշակույթի մասին։ Նշենք, որ նրա հրավերով գիտաժողովի մասնակիցները հունիսի 23-ին այցելեցին Օրգովի տիեզերական չափումների կենտրոն, որտեղ տարիներ առաջ գիտնականի գլխավորությամբ տեղադրվել է աշխարհի ամենամեծ տիեզերական ալեհավաքը։

«Աստվածաշնչական Հայաստան» գիտաժողովի վերջին օրը համընկավ Սահակ-Մաշտոցյան եկեղեցական տոնի հետ։ Խորհրդանշական էր այդ օրվա սուրբ պատարագը, որ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցեց Շահե արք. Աճեմյանը գիտաժողովի հարյուրավոր մասնակիցների և հյուրերի ներկայությամբ։

Այնուհետև ակադ. Վ. Բարխուդարյանի նախագահությամբ կայացավ գիտաժողովի եզրափակիչ նիստը, որի ընթացքում ամփոփվեցին մասնաճյուղերի աշխատանքները։ «Աստվածաշնչական Հայաստան» գիտաժողովն, այսպիսով, ավարտվեց՝ գրելով լուսավոր տողեր Օշականի նորահաստատ Դպրատան, նաև մեր երկրի գիտամշակութային կյանքի տարեգրության մեջ։

ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐՅԱՆ